ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1275-Ա « 09 » մարտի 2026թ.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը և 12-րդ կետի 1-ին ենթակետը.

1. Հասարակական տրանսպորտում գործող միասնական տոմսային համակարգի շարունակականությունն ապահովելու ծառայությունների ձեռքբերման գնման գործընթաց իրականացնելու նպատակով՝ «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին, օրենքով սահմանված կարգով, սահմանել որպես պատասխանատու ստորաբաժանում:

2. Լիազորել «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին, որպես պատասխանատու ստորաբաժանում, գնման գործընթացների շրջանակներում իրականացնել պայմանագրի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով պայմանագրի լուծման գործընթացը:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին:

4. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ